


ԸՆԹԵՐՑՈՐ

Մուտքը չի կատարված
Մուտք | Գրանցում



ԱՇԽԱԳԻՐ



ՍԱՐԱՅԱՐԹԻ
ՉՈՒՅԵՐԸ

ՂԱՀՊԱՆԵԼ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #49, 20-03-2010

Անցուդարձ

Տեղադրվել է՝ 2010-03-20 01:10:47 (GMT +04:00)

ՂԱՀՊԱՆԵԼ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՏԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիպրոսի Մելգոնյան դպրոցը դարձնել համահայկական կրթօջախ

Մերոպ քահանա Արամյանը ցավով է արձանագրում, որ այսօր մեր դպրոցների շրջանավարտներն անմրցունակ են ու չեն համապատասխանում համաշխարհային չափանիշներին: Դարեր շարունակ ազգային գոյությունը խարսխվել է կրթության եւ հոգեւոր արժեքների վրա, հետեւաբար հայ ժողովրդի շարունակությունն ապահովելու համար այսօր անհրաժեշտ են հզոր գաղափարներ եւ դրանց իրագործմանը համապատասխան միջավայր:

Աշխարհի որեւէ կետում հայ երիտասարդներին հայեցի կրթություն տալու հնարավորությունը դարձել է գերխնդիր ու պետք է իրականություն դարձնել: Գաղափարը, որի շուրջը համախմբվեցին տարբեր երկրների հայեր, ծնունդ տվեց 21-րդ դարի համահայկական դպրոց ստեղծելու նախաձեռնությանը: Նպատակն է՝ ստեղծել միջավայր, որտեղ սովորելը դառնա յուրաքանչյուր հայի երազանքը եւ որի տված գիտելիքների շնորհիվ հայ երիտասարդները կարողանան նվաճել բարձունքներ:

«Մելգոնյան դպրոցն իր կրթական ավանդներով, բազմամյա պատմության եւ բարենպաստ աշխարհագրական տեղակայվածությամբ այս ծրագրի իրականացման հնարավորություն է տալիս», նկատում է Մերոպ քահանա Արամյանը:

Գիպրոսում 1926 թ. հիմնադրված Մելգոնյան կրթական հաստատությունը փակվեց 2005 թ.: Այդ ժամանակ դպրոցում սովորում էր 250 աշակերտ: «Դպրոցը հայ ժողովրդի սեփականությունն է, բայց լիազորված էր Պոլստ պատրիարքարանին, որն էլ այն հանձնել է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը: Խնդիրների պատճառով միությունը որոշել է փակել դպրոցն ու տարածքը վաճառել», ասում է Արամյանը:

Այժմ շենքում վարձակալությամբ հունական դպրոց է գործում: Մերոպ քահանա Արամյանը պատմում է, որ հույն երեխաները հայոց մեծերի կիսանդրիների վրա են նկարում, մինչդեռ այն պատմական հսկայական նշանակություն ունեցող շինություն է:

Նախաձեռնող խմբի անդամներն առաջարկում են Մելգոնյանի հիմքի վրա ստեղծել բարձրորակ, կուրսապես ամուր եւ առողջ կառավարման համակարգ ունեցող համահայկական դպրոց:

«Հանրապետական դպրոցի ստեղծման նախաձեռնությունն այդ դպրոցի կենտրոնական գաղափարն է: Մելգոնյանի կյանքն ուղղակի կապված է մեր կրթական կյանքի, մտածողության հետ: Այն մեր գոյության համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է», ասում է Ֆրանսիայից Կարապետ Տաքեայանը, որը երկար տարիներ որպես փոխտնօրեն պաշտոնավարել է այդ կրթօջախում:

Կրթությունը կազմակերպվելու է համաձայն ուսումնական ծրագրի, որը հիմնված է համաշխարհային բարձրագույն չափանիշների եւ կրթական նորագույն տեխնոլոգիաների խթանման վրա: Երեխաների ընտրությունը պայմանավորված է լինելու բացառապես տաղանդով եւ գիտելիքներով: Անվճարունակ երեխաների համար կսահմանվեն անհատական կրթաթոշակներ:

Հարցի Ֆինանսական կողմը լուծված է: Կան բարերարները, ովքեր պատրաստ են գումար ներդնել, որպեսզի դպրոցը չփակվի: «Նրանք պատրաստակամ են, խանդավառված», ասում է քահանան:

Ռուսաստանից Աշոտ Ասլանյանը նկատում է, որ խումբը նախաձեռնել է դպրոցը նորոգել առանց որեւէ հետին շահի: Առաջին նպատակը՝ արդիականացել շենքը, զինել լաբորատորիան, տեխնիկապես հագեցնել, իդեալական պայմաններ ստեղծել հանրակացարանի համար, նորոգել մարզական համալիրը:

Խնդիրները հիմնականում իրավական են: Դպրոցը գտնվում է Հայկական բարեգործական ընդհանուր միության իրավասության տակ է: Մակայն նախաձեռնող խմբի անդամները հույս ունեն, որ բանակցությունները դրական արդյունք կունենան: Ասլանյանի խոսքերով իրենց





USAMUT
APAPAT 73



ԴԻՄՈՒՄ-ԽՆԴՐԱԳԻՐ



ՀԱՄԱԾԱՌՈՒԹՅԱՆ ԴԱՅՎԱԿԱՆ
ԿՈՆԳՐԵՍ
ՊԵՏՅՈՒՆԱԿԱՆ ԿԱՅՔ

ՈՒՇԱՐՈՒԹՅՈՒՆ



ՓՆՏՐՈՒՄ Է ...



ՄԵԿ ՏԱՐԻ ԱՈՍԱԶ



համար առաջնահերթ նշանակություն ունի, որ դպրոցը շարունակի գործել, թե ում իրավասության տակ կգտնվի՝ Էական նշանակություն չունի:

Մերոպ քահանան առաջարկում է չշարժվել մտայնությամբ՝ սփյուռքում դպրոց փակել ու Հայաստանում երկուսը կառուցելու: Դրանում ոչ թե պետք է դպրոց փակել, այլ, ընդհակառակը, նպաստել դրանց շատացմանը: Շվեյցարիայից Արդեն Շելեֆյանը համոզված է, որ սփյուռքյան իրականությունը պահպանելով պետք է պահպանել Հայաստանը՝ Մեղզոյան դպրոցն էլ այդ իրականության մի մասնիկն է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #49, 20-03-2010

- 2010-03-20 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԷՂՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՐԹԱՅՈՒՄ ԴԱՏԱԴԱՐՏՈՒՄ ԵՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐԴՈՂԱՆԻՆ
- 2010-03-20 ՑԵՐԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒՏՄԱՄԲ Ե ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ԼՈՐՄԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏՈՒՄԸ
- 2010-03-20 ԲՈՒՂԱՐԻԱՆ ԿՐԿԻՆ ԿՔՆԱՐԿԻ ՀԱՅՈՑ ՑԵՐԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵԿ
- 2010-03-20 ԵՐՈՒՄԱՐԵՄԻ ԵՐԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆԻ ՉԱՐՄԱՆԸ
- 2010-03-20 ԳՈՐԾԱՐՔ ԿԱ՝ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԵՎ ՊԵՏԵԱՐՏՈՒՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
- 2010-03-20 ՆՈՐԻՑ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՐ
- 2010-03-20 ԱՄՆ-Ը «ՍԻՐՈՒՄ» Ե ՎՐԱՍԱՆԸ. ՓՈԹՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿՈՒԹԵՐԸ ԴՐԱՆԻՑ ԳԵՏՈՒ ԵՆ
- 2010-03-20 ԴԵՆ ՊԱՐԶ ԶԵ՝ ԿԳՆԱ՝ ՍԵՐՉ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎԱՇԽԳՏՈՆ
- 2010-03-20 ԲԱԹՈՒՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Ե ԵՐԵՎԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
- 2010-03-20 ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՏԿՅԱԼՆԵՐ
- 2010-03-20 ՕՐԵՆԸ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՍԱՐ ԼԻՆԻ ԲՈՒՆՈՒՐԻ ՀԱՄԱՐ
- 2010-03-20 ՇԵՆԳԵՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԵՐԿՐՆԵՐ ՄՈՒՏՔԻ ՎԻՉԱՅԻ ՆՈՐ ՎԱՐԳ
- 2010-03-20 ԿԹԱՆԿԱՆԱ՝ ԹՈՂՆԱՄԻՍԸ
- 2010-03-20 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԱՐԴԵՆ ՄՈՏԵՆՈՒՄ Ե 50 ՏՈԿՈՍԻՆ
- 2010-03-20 ՎԻՃԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՆԻՇՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ «ԳՐԱՆԻ ԲԵՆԴԻՆ»
- 2010-03-20 ՖՐԱՆԿՑՈՒՆԻԱՅԻ ՄԻԱՄՅԱԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
- 2010-03-20 ԳԵՐԱԿԱՆԵՄԻԱՅԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՐԱՐՅԻՆ
- 2010-03-20 «ԱՐՄՄՈՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐՎԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե
- 2010-03-20 ՆՐԱ ՀԱՄԱՐ ԹԱՏՐՈՆԸ ՄՐԲՈՒԹՅՈՒՆ Ե ՈՒ ՏԱԾԱՐ
- 2010-03-20 ՈՒՇԱԳՐԱԿ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ
- 2010-03-20 **ՊԱՅՊԱՆԵԼ ՍՓՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**
- 2010-03-20 ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԸ ԿՈՐՄՈՒՐՈՇԵԼ Ե ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ
- 2010-03-20 ՀԱՅ ՇԱՄՄԱՏԻՍՏՆԵՐԻՑ ԵՐԵՔՆ ՈՒՐԵԳՐԵՐ ՆՎԱՃԵՑԻՆ
- 2010-03-20 ԱՐՈՆՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՆՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՏԿԵՑ
- 2010-03-20 ՈՌԲԱՍԱՏԱՆՈՒՄ ՄՊԱՆՎԵԼ Ե 52-ԱՅՅԱ ՀԱՅՈՒՐԻ

ԱՅԼ ՀՐԱԴԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- 2010-03-19 ԿԱՏԱՐՎԵՑ ՈՌԲԱԿԱՆ ԵՎԵՆԵՑՈՒ ԳԻՄԱՐԿԵԸ
- 2010-03-19 «ԵԹԵ ՀԱՐԿ ԼԻՆԻ, 100 ՀԱԶԱՐ ՀԱՅԵՐԻՆ ԿԿՏԱՐԵՄ ԵՐԿՐԻՑ, ՈՐՈՎՅԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԻՄ ԹԱՐԱԹԱՑԻՆԵՐԸ ԶԵՆ»
- 2010-03-19 ՀԱՅԵՐԻ ՑԵՐԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱՆԻ ԱՊԱՅՈՒՅՑԸ
- 2010-03-19 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԱՊՐԻԼԻ 12-13-ԻՆ ԿՄԵԿԻ ԱՄՆ
- 2010-03-19 «ՄԵՔԸ ԶԵՆՔ ՈՒՉՈՒՄ ԼԻՆԵԼ ԹԱԼԵԱԹԻ, ԷՆՎԵՐԻ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԻ ԹՈՌՆԵՐԸ»
- 2010-03-19 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՈՌԲԱՍԱՆԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՐԱՅՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԿԴԻՄԱԿԱՅԵՆ ՄԻԱՄԻՆ
- 2010-03-19 «252-ՐԴ ԲԱՆԱԶԵԿ ԶԻ ԿԱՐՈՂ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ»
- 2010-03-19 ԷՐՈՂՈՂԱՆԻ ՄՊԱՌՆԱԼԻԵՆ ԱՆՀԱՐԻ Ե ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԻՆ
- 2010-03-19 ՈՂՋ ԱԴԻԲԵՉԱՆԸ ՊԻՏԻ ԶՎԵԱՐԿԻ ԼՂ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՆՐԱԹՎԵԼ
- 2010-03-19 ԱԴԻԲԵՉԱՆԱԿԱՆ ԿՈՐԱԸ ԳՆԴԱԿՈՇԵԼ Ե ԿՈԹԻ ՈՒՐՈՒԹՅԱՄԲ

